

**ՕՊԵՐԱՑԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՓՈՒՈՒՄ ԽՆԴՐԻ
ՊԱՐԶՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՑՆ ԸՍՏ ԱՌԱԶԱՏԱՐ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ***

*Վ. Հ. ՇԱՌՅԱՆ, պահեստազորի գնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի
օպերատիվ արվեստի հետազոտությունների կենտրոնի
գիտնական-վերլուծաբան*

Ներածություն

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ժամանակակից պատերազմներում (և ապագային միտված զարգացումներում) բոլոր մակարդակների հրամանատարներից և շտաբներից պահանջվում է համակողմանի և համակարգված պլանավորում, որը հնարավորություն է տալիս առաջադրված խնդիրների հաջող կատարման համար իրատեսորեն կիրառելու ուժերն ու միջոցները, ինչպես նաև զորքերի կառավարման գործում ապահովելու հակառակորդից առաջանցիկությունը: Այս հարցում առանցքային նշանակություն ունի զորքերի կառավարման վրա ծախսվող ժամանակի կրճատումը¹:



Տվյալ տեսանկյունից դիտարկենք զորքերի կառավարման նկատմամբ երկու հայեցակարգային մոտեցումները, որոնցից մեկը կենտրոնացված եղանակն է (ՌԴ ԶՌ^{**}), իսկ մյուսը՝ ապակենտրոնացված (ԱՄՆ-ի Բանակ):

Որպես ուսումնասիրության օբյեկտ վերցնենք բանակային կորպուսը, որը ՌԴ ԶՌ-ում համարվում է օպերատիվ-մարտավարական օղակ, իսկ ԱՄՆ-ի Բանակում՝ մարտավարական: Ըստ այդմ առաջրվում են դրանց նույնական գործողությունները՝ ՌԴ ԶՌ-ում օպերացիայի կազմակերպման ժամանակ որոշումների ընդունման փուլում խնդրի պարզորոշումը և ԱՄՆ-ի Բանակում՝ ռազմական որոշումների կայացման գործընթացում (ՌՈԿԳ, *Military Decision-Making Process*) խնդրի վերլուծությունը: Ընդամին

* Հոդվածն ստացվել է 04.09.2024: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 19.10.2024:

¹ Տես է. Կ. Սարկիսյան, Հրամանատարի և շտաբների աշխատանքների արդյունավետության վրա ազդող պայմաններն ու մոտեցումները ժամանակակից պատերազմների (օպերացիաների) բնույթի հաշվառմամբ: «ՀԲ», 2023, հմ. 2:

** Խորհրդային Միության սկզբունքն էր, որը ժառանգաբար փոխառել են ՌԴ-ն և մի շարք հետխորհրդային պետություններ, այդ թվում՝ Բելառուսը, Ղազախստանը, Հայաստանը:

ՌՈԿԳ միջոցով հրամանատարության վերադաս օղակները միջոցառումներ են նախաձեռնում օպերատիվ մակարդակով: Վերադաս շտաբը ռազմական գործողությունների թատերաբեմին և առաջադրանքին է հարմարեցնում կորպուսը, որի համար այն ծավալված է²:

Օպերացիայի կազմակերպման ուղղությամբ հրամանատարի ու շտաբի աշխատանքն սկսվում է վերադաս շտաբից մարտական խնդրի ստացմամբ, ներառյալ՝ որոշման ընդունմամբ, ըստ որի՝ ՌԴ ՋՈՒ-ում ստացված խնդիրը պարզորոշվում է, գնահատվում է հրադրությունն ու ընդունվում է օպերացիայի որոշումը³: ԱՄՆ-ի Բանակում ՌՈԿԳ-ն բաղկացած է յոթ քայլից՝ խնդրի ստացում, խնդրի վերլուծություն, օպերացիայի ընթացքի մշակում, մշակված օպերացիաների վերլուծություն, դրանց համեմատություն, օպերացիայի պլանի հաստատում, հրամանների արձակում⁴:

Քանի որ և՛ օպերացիաների կազմակերպման, այդ թվում՝ որոշման ընդունման, և՛ ՌՈԿԳ համալիր միջոցառումները շատ ծավալուն և աշխատատար են, ապա նպատակահարմար ենք համարում այս գործընթացների դրական և բացասական կողմերի ուսումնասիրությունը դիտարկել ըստ՝

ա) զորքերի կառավարման գծով հրամանատարի և շտաբի կատարած աշխատանքի մեթոդների,

բ) կենտրոնացված և ապակենտրոնացված կառավարման առանձնահատկությունների և դրանց ազդեցության:

Աշխատանքի մեթոդները

ՌԴ ՋՈՒ-ում օպերացիայի կազմակերպման աշխատանքները կարող են կատարվել հաջորդական կամ զուգահեռ մեթոդներով կամ դրանց համակցմամբ: Մեթոդի ընտրությունը կախված է իրադրությունից, առաջադրված խնդրի բնույթից և զորքերի (ուժերի) պատրաստման ժամկետներից⁵:

ԱՄՆ-ի Բանակում ընդունված է մեկ ընդհանուր՝ զուգահեռ, մեթոդը: Առաջադրանքի ստացման փուլի վերջին քայլը օպերացիային նախապատրաստման մասին վերադասի հրամանն է՝ հղված ենթակա և օժանդակ ստորաբաժանումներին: Դրանում նշվում են առնվազն օպերացիայի տեսակը, օպերացիայի վարման ընդհանուր վայրը, նախնական ժամանակացույցը և ցանկացած անհրաժեշտ տեղաշարժ կամ հետախուզություն: Օպե-

² Տես "FM 100-15. Corps Operations". Headquarters, Department of the Army. Washington, DC, 29 October 1996, Chap. 1, P. 1-1 (<https://www.bits.de/NRANEU/others/amd-us-archive/fm100-15%2896%29.pdf>):

³ Տես «Уяснение боевой задачи». «Военный энциклопедический словарь». Министерство обороны РФ (https://encyclopedia.mil.ru/encyclopedia/dictionary/details_rvsn.htm?id=10803@morfDictionary):

⁴ Տես "FM 101-5. Staff Organization and Operations Contents". Headquarters, Department of the Army. Washington, DC, 31 May 1997, Chap. 5, P. 5-3 (<https://www.aiia.ed.ac.uk/~arpi/SUO/DOC/fm101-5.pdf>):

⁵ Տես «Методы работы командующих (командиров) и штабов по управлению войсками (силами флота)». «Война и мир в терминах и определениях». Под общей ред. Д. Рогозина. М., 2014 (https://war_peace_terms.academic.ru/):

րացիային նախապատրաստման՝ վերադասի հրամանները նպաստում են զուգահեռ պլանավորմանը, որը միտված է այն բանին, որ մի քանի շարակարգ աշխատեն իրենց ՌՌԿԳ-ով միաժամանակ: Սա կարևոր նշանակություն ունի ենթակա ստորաբաժանումների գործողություններն արագացնելու և պլանավորման համար առավելագույն ժամանակ տրամադրելու տեսանկյունից: Ջուզահեռ պլանավորումը հիմնված է օպերացիային նախապատրաստման՝ հրամանատարի արձակած ճշգրիտ և պատեհաժամ հրամանների, ինչպես նաև ստացման առաջին իսկ պահից շարակարգների միջև լրիվ տեղեկության փոխանակման վրա⁶:

Ջուզահեռ պլանավորման մեթոդի կիրառման դեպքում հրամանատարները և շտաբները արագ ձեռք են բերում հմտություն, ինչի շնորհիվ խնայում են ժամանակը, մինչդեռ տարբեր մեթոդների օգտագործման ժամանակ պահանջվում են լրացուցիչ ընթացակարգեր, հետևաբար՝ լրացուցիչ ժամանակ, ինչը արդի մարտական գործողությունների արագընթացության պայմաններում նպատակահարմար չէ:

Կենտրոնացված և ապակենտրոնացված կառավարում

Կենտրոնացված կառավարման ժամանակ, անկախ օպերացիային հրամանատարի ու շտաբի նախապատրաստվելու աշխատանքային մեթոդից, որոշման ընդունումը կատարվում է «վերևից ներքև», իսկ օպերացիայի պլանավորումն ու առաջիկա գործողություններին զորքերի գործնական նախապատրաստումը՝ «ներքևից վերև» սկզբունքներով: Փաստենք, որ հրամանատարը, պարզորոշելով իր անմիջական վերադասի խնդիրը, կազմում է իրենից երկու-երեք աստիճանով ցածր օղակների համար մանրամասնված պլան⁷:

Ընդ որում, ենթակա շտաբի, զորատեսակների, հատուկ զորքերի բաժինների (բաժանմունքների), ծառայությունների պետերի հետ քննարկումներից հետո հրամանատարը միանձնյա ընդունում է որոշում ստացված խնդրի խոր պարզորոշման ու իրադրության մանրամասն գնահատման հիման վրա⁸:

- **Կենտրոնացված կառավարման ժամանակ.**

- բոլոր մեթոդներով աշխատանքի դեպքում հրամանատարը խնդրի պարզորոշումից հետո զորամիավորման և ենթակա ստորաբաժանումների (զորամասերի) շտաբներին տալիս է մարտական խնդրի և գալիք գործողությունների վերաբերյալ կողմնորոշումներ (ըստ անհրաժեշտության՝ նախնական կարգադրություններով),

⁶ Stu “FM 101-5. Staff Organization and Operations Contents”, Chap. 5, P. 5-5 (<https://www.aii.ed.ac.uk/~arpi/SUO/DOC/fm101-5.pdf>):

⁷ Stu «Основы управленческой деятельности командира». Учебно-методическое пособие. Под ред. С. Г. Дендера. Минск, 2021:

⁸ Stu «Методы работы командующих (командиров) и штабов по управлению войсками (силами флота)». «Война и мир в терминах и определениях». Под общей ред. Д. Погозина. М., 2014 (https://war_peace_terms.academic.ru/):

- ժամանակը հաշվարկվում է համաձայն գորքերի ղեկավարման հիմնական աշխատանքների համար սահմանված ժամանակի, որի կրճատման նպատակով կիրառվում են գորքերի կառավարման ավտոմատացված համակարգեր (ՋԿԱՀ-ներ): Ըստ անհրաժեշտության՝ ճշգրտվում է վարչակազմի աշխատանքի ժամանակացույցը:

Ապակենտրոնացված կառավարման ժամանակ ռազմական որոշումների կայացումը կատարվում է միասնական, հաստատված և իր արդյունավետությունն ապացուցած վերլուծական գործընթացով, ըստ որի՝ հրամանատարը և շտաբը հնարավորություն ունեն ուսումնասիրելու մարտադաշտում տիրող իրավիճակն ու կայացնելու համապատասխան որոշումներ: ՌՈԿԳ-ն կազմակերպելիս հրամանատարը պետք է իմանա երկու աստիճան բարձր օդակի հրամանատարի մտադրությունը, իսկ մանրամասնումը կատարի մեկ աստիճանով ցածր օդակի համար⁹: Ընդսմին հրամանատարը որոշում կայացնելուց առաջ հիմնականում խորհրդակցում է ենթակա հրամանատարների հետ, քանի որ նրանք գտնվում են մարտադաշտին ավելի մոտ և կարող են ավելի ճշգրիտ ներկայացնել իրավիճակը: Հրամանատարը այդպես ավելի հստակ պատկերացում է կազմում առաջիկա գործողության կազմակերպման մասին, ինչի շնորհիվ ապահովվում է զուգահեռ պլանավորման արդյունավետությունը:

Արագ որոշումներ պահանջող իրավիճակներում հրամանատարը դիմում է վերադաս շտաբին և տեղեկացնում օպերացիայի իր ընտրած պլանի մասին, քանի որ դա կարող է ազդել վերադասի կազմած պլանի վրա¹⁰:

- **Ապակենտրոնացված կառավարման ժամանակ.**
 - հրամանատարը, ստանալով խնդիրը, բաշխում է ժամանակը,
 - հրամանատարը ենթակա ստորաբաժանումներին հնարավորինս արագ ցուցումներ է տալիս ՌՈԿԳ ժամանակի կրճատման, բաշխման, նախնական հետախուզության սկսման, թույլատրելի տեղաշարժերի, շտաբի աշխատանքի և այլ միջոցառումների վերաբերյալ, որպեսզի նրանք ունենան օպերացիան պլանավորելու և նախապատրաստելու համար հնարավորինս շատ ժամանակ,
 - հրամանատարը ժամանակի առնվազն երկու երրորդը հատկացնում է ենթակա ստորաբաժանումներին օպերացիան պլանավորելու և նախապատրաստելու համար, իսկ իր և իր շտաբի պլանավորման համար թողնում է ժամանակի մեկ երրորդը¹¹:

Այսպիսով՝ ապակենտրոնացված կառավարման ժամանակ ենթակա շտաբները խնդրի ստացումից հետո ավելի տեղեկացված են լինում իրադրության և խնդիրների վերաբերյալ, ունենում են ավելի շատ ժամանակ օպերացիայի որոշման ընդունման և պլանավորման համար, քան կենտրոնացված կառավարման դեպքում:

⁹ Stu “FM 101-5. Staff Organization and Operations Contents”, Chap. 5, P. 5-22 (<https://www.aiai.ed.ac.uk/~arpi/SUO/DOC/fm101-5.pdf>):

¹⁰ Տես նույն տեղում, էջ 5-29:

¹¹ Տես նույն տեղում, էջ 5-5:

Դիտարկված աշխատանքի մեթոդները և կառավարման եղանակները մեզ հնարավորություն են տալիս ուսումնասիրելու խնդրի պարզորոշումը (ՌԴՋՈՒ) և վերլուծությունը (ԱՄՆ-ի Բանակ):

Կենտրոնացված կառավարման դեպքում խնդրի պարզորոշման ժամանակ հրամանատարը պետք է հասկանա.

- ավագ պետի մտահղացումը, այն գործողությունների նպատակը և խնդիրները, որոնք պետք է կատարել օպերացիայի (մարտական գործողությունների) ընդհանուր նպատակին հասնելու համար,
- զորամիավորման տեղն ու դերը՝ ըստ ավագ պետի մտահղացման,
- օպերացիայի ցուցանիշներն ու միջանկյալ խնդիրները,
- հարևանների խնդիրները, նրանց ու զորատեսակների և մյուս զորքերի զորամիավորումների (զորամասերի) հետ փոխգործության պայմանները¹²:

Հրամանատարը խնդրի պարզորոշման հիման վրա կատարում է զորամիավորման առաջիկա գործողությունների վերաբերյալ եզրահանգումներ:

Ապակենտրոնացված կառավարման դեպքում խնդրի վերլուծությունը կատարվում է ոչ պարտադիր հաջորդականությամբ հետևյալ 17 քայլերով¹³.

- վերադաս շտաբի հրամանի վերլուծություն,
- մարտադաշտի նախնական հետախուզական նախապատրաստում,
- նշված, ենթադրվող և հիմնական խնդիրների որոշում,
- առկա ուժերի ու միջոցների վերանայում,
- սահմանափակումների նախանշում,
- կարևոր փաստերի ու ենթադրությունների պարզում,
- ռիսկերի գնահատում,
- հրամանատարին անհրաժեշտ նախնական կարևոր տեղեկույթի (*Initial CCIR*) ցանկի սահմանում,
- նախնական հետախուզական հավելվածի սահմանում,
- առկա ժամանակի օգտագործման պլանավորում,
- փոփոխված խնդրի ձևակերպում,
- խնդրի համառոտ պարզաբանում,
- փոփոխված խնդրի հաստատում,
- օպերացիայի նախնական որոշման մշակում,
- նախնական հրամանատարական ցուցումների տրում,
- օպերացիային նախապատրաստման հրամանի արձակում,
- փաստերի ու ենթադրությունների ամփոփում:

ՌՈԿԳ-ի համար կարևոր նշանակություն ունի խնդրի վերլուծությունը, որի շնորհիվ հնարավոր է լինում սահմանել մարտավարական պրոբլեմը և

¹² Ств «Уяснение боевой задачи». «Военный энциклопедический словарь». Министрство обороны (https://encyclopedia.mil.ru/encyclopedia/dictionary/details_rvsn.htm?id=10803@morfDictionary):

¹³ Ств “FM 101-5. Staff Organization and Operations Contents”, Chap. 5, P. 5-5 (<https://www.aiai.ed.ac.uk/~arpi/SUO/DOC/fm101-5.pdf>):

սկսել հնարավոր լուծումների որոնում: Դա հրամանատարին հնարավորություն է տալիս տեսանելիացնելու (վիզուալիզացիա) մարտադաշտը:

Խնդրի վերլուծությունը հիմնովին տարբերվում է խնդրի պարզորոշումից, քանի որ ներառում է միջոցառումներ, որոնք սահմանվում են մտահղացման և որոշման կայացման փուլերում, իսկ որոշ միջոցառումներ նաև օպերացիայի պլանավորման ժամանակ:

Խնդրի պարզորոշման հիման վրա հաշվարկվում է օպերացիայի նախապատրաստման ժամանակը բոլոր օղակներում, որոշման ընդունման և պլանավորման համար մշակվում է հրամանատարի, տեղակալների, զորատեսակների ու ծառայությունների պետերի աշխատանքի ժամանակացույցը: Խնդրի վերլուծության հիման վրա հրամանատարը զարգացնում է օպերացիայի իր նախնական մտահղացումը, վերանայված խնդիրը վերածնակերպելուց հետո, ըստ անհրաժեշտության, փոփոխում է իր մտահղացման բովանդակությունը, ցուցումներ է տալիս շտաբին, իսկ շտաբը ենթակա և ապահովող ստորաբաժանումներին ուղարկում է նախնական կարգադրություն¹⁴:

Ամփոփելով խնդրի պարզորոշման և վերլուծման գործընթացները՝ կարող ենք եզրակացնել հետևյալը.

- **կենտրոնացված կառավարման դեպքում.**

- հրամանատարի մասնակցությունը օպերացիայի կազմակերպման ամբողջ գործընթացին առաջացնում է լրացուցիչ ծանրաբեռնվածություն՝ ազդում է նրա աշխատանքի որակի և արդյունավետության վրա, կաշկանդում է շտաբի ինքնուրույն աշխատանքը,
- գործընթացին մասնակից պաշտոնատար անձանց գերակշիռ մասը չի կարողանում դրսևորել իր լավագույն որակները, ինքնուրույնությունը և ստեղծագործ մոտեցումը,
- նշված գործընթացում չեն երևում հրամանատարի անձնական փորձի, ներըմբռնողության, ստեղծագործական ունակությունների և իրադրության գնահատման կարողությունը, ինչպես նաև վերադաս շտաբի և ենթակաների հարաբերությունները (շփումները),

- **ապակենտրոնացված կառավարման դեպքում.**

- հրամանատարը կարող է ազդել շտաբի միայն մի փոքր մասի վրա կամ ընդհանրապես չազդել, քանի որ խնդրի վերլուծությունը հիմնականում կատարում է շտաբը, իսկ հրամանատարը ինքնուրույն կատարում է խնդրի իր վերլուծությունը, որպեսզի ունենա շտաբի աշխատանքը գնահատելու չափանիշ,
- որոշում կայացնելուց առաջ հրամանատարը կարող է խորհրդակցել վերադաս շտաբի և ենթակաների հետ իրատեսական որոշման հասնելու համար,
- իրադրության փոփոխությունը կարող է հրամանատարին ստիպել վերադաս հրամանատարի մտահղացման իրագործման համար պլանավորել օպերացիաների այլ ընթացք,

¹⁴ Տես նույն տեղում:

- շտաբը օպերացիայի պլանի մշակումը և վերլուծությունը կատարում է վերադաս շտաբի պլանավորման հետ զուգահեռաբար՝ նրա հատուկ ուղղորդմամբ, իսկ անհրաժեշտության դեպքում աջակցում է ենթակա շտաբին պլանավորման և համակարգման հարցերում¹⁵,
- շտաբում կազմակերպված քննարկումը հիմնվում է խնդրի վերլուծության արդյունքներով կատարված եզրակացությունների վրա, ինչը հրամանատարին և շտաբին օգնում է ձևակերպելու առաջիկա գործողության համար պահանջմունքների ընդհանուր պատկերը,
- շտաբի սպաները մշտապես թարմացնում են իրենց գնահատականները և այլ կարևոր տեղեկություններ, ինչը նրանց հնարավորություն է տալիս պլանավորման գործընթացի համար մշակելու եզրահանգումներ:

Ռեսուրսափրությունների արդյունքներով կարելի է կատարել հետևյալ **եզրակացությունները**.

1) կենտրոնացված կառավարման ժամանակ խնդրի պարզորոշման փուլում՝

- մեծանում են հրամանատարի դերն ու նշանակությունը և պատասխանատվությունը, սակայն, մյուս կողմից, նվազում են շտաբի դերը, պաշտոնատար անձանց նախաձեռնողականությունը,
- հրամանատարը և շտաբը նորամուծություններ, խնդիրների ու միջոցառումների կատարման օպտիմալացում գրեթե չեն պլանավորում և ձեռնարկում,

2) ապակենտրոնացված կառավարման ժամանակ խնդրի վերլուծության փուլում՝

- զուգահեռ պլանավորմամբ կրճատվում է օպերացիայի կազմակերպման ժամանակը,
- վերադաս և ենթակա շտաբների հետ մշտապես պահպանվում են փոխգործությունը և կառավարման միասնականության տարրերը,
- հրամանատարը վերաձևակերպում է իր մտադրությունը և պարբերաբար կողմնորոշում ենթակա շտաբներին:

Ընդհանուր առմամբ, խնդրի պարզորոշման և վերլուծության տարբերությունը հիմնականում այն է, որ ԱՄՆ-ի Բանակի պարագայում խնդրի վերլուծությունը, ի թիվս այլ գործողությունների, ներառում է իրադրության գնահատում (հակառակորդ, տեղանք, կլիմայական պայմաններ և այլն), ՌԴ ՋՈՒ-ի պարագայում դա արվում է խնդրի պարզորոշումից հետո՝ իրադրության գնահատման փուլում:

Ամփոփում

Ըստ խնդրի պարզորոշման ու խնդրի վերլուծության հետազոտությանը բացահայտված դրական ու բացասական կողմերի գնահատման՝ **կարող ենք հանգել այն եզրակացության, որ օպերացիայի կազմակերպման՝ որոշման կայացման փուլում արդյունավետությունը կմեծանա, եթե.**

¹⁵ Տես նույն տեղում, էջ 5-29:

1) ժամանակի հաշվարկումը և առաջիկա գործողությունների վերաբերյալ ենթակա շտաբների կողմնորոշումը կատարվեն մարտական խնդրի առաջադրումից հետո, և տարբեր (որոշման ընդունման, խնդիրների առաջադրման, պլանավորման) փուլերում կատարվի ժամանակի կրճատում ենթականերին հատկացվող ժամանակը մեծացնելու նպատակով,

2) խնդրի պարզորոշման միջոցառումների շարքում ներառվեն իրադրության գնահատման և մտահղացման ձևակերպման հարցեր,

3) խնդրի պարզորոշման միջոցառումներում հաշվի առնվեն առաջադրանքային կառավարման սկզբունքները, ինչի շնորհիվ կապահովվի մեկ մեթոդով ապակենտրոնացված որոշումների կայացումը:

ОПЕРАТИВНОЕ ИСКУССТВО

ВОПРОС УЯСНЕНИЯ ЗАДАЧИ НА ЭТАПЕ ОРГАНИЗАЦИИ ОПЕРАЦИИ НА ОСНОВЕ ПОДХОДОВ ВЕДУЩИХ ГОСУДАРСТВ

В. Г. ШАРЯН, полковник запаса, ученый-аналитик Центра исследований оперативного искусства НИУО МО РА

РЕЗЮМЕ

Опыт показывает, что в современных войнах от командиров и штабов всех уровней требуется всестороннее и систематизированное планирование, что позволяет реалистично применять имеющиеся силы и средства для успешного выполнения поставленных задач, а также упреждать противника в управлении войсками. В данном аспекте рассматриваются два концептуальных подхода: централизованное (ВС РФ) и децентрализованное (Армия США) управление войсками, а также сопоставляются аналогичные действия на уровне армейского корпуса – уяснение задачи на этапе принятия решения в процессе подготовки операции в ВС РФ и анализа задачи в процессе принятия решения в Армии США (*Military Decision-Making Process*).

На основе проведенных исследований в процессах уяснения задачи и анализа задачи можно сделать вывод, что на этапе вынесения решения эффективность подготовки операции возрастет, если:

- предварительный расчет времени и ориентирование подчиненных штабов относительно предстоящих действий будут проводиться после получения боевой задачи, а на разных этапах подготовки операции (принятие решения, постановка задачи, планирование) будет осуществлено сокращение времени в целях увеличения предоставляемого подчиненным времени;
- вопросы, касающиеся оценки обстановки и формулировки замысла, будут включены в перечень основных мероприятий по уяснению задачи;

- среди мероприятий по уяснению задачи будут учтены принципы директивного управления, благодаря чему будет обеспечен осуществляемый единым методом процесс децентрализованного принятия решений.

OPERATIONAL ART

THE ISSUE OF MISSION ANALYSIS AT THE STAGE OF ORGANIZING FOR THE OPERATION BASED ON THE APPROACHES OF THE LEADING STATES

V. H. SHARYAN, Colonel (Res.), Research Fellow, Center for Research on Operational Art, NDRU, MOD, RA

SUMMARY

The experience suggests that in modern wars commanders and headquarters at all levels are required to comprehensively and systematically plan, which makes it possible to realistically use available forces and means for successful completion of assigned tasks, as well as preemption of the enemy in command and control. In this respect, two conceptual approaches are considered: centralized (the RF Armed Forces) and decentralized (the US Army) command and control, as well as similar actions are juxtaposed at the army corps level – mission analysis at the decision-making stage in the process of preparing an operation in the RF Armed Forces and analyzing the task in the mission in the decision-making process in the US Army (*Military Decision-Making Process*).

Based on the research carried out in the processes of mission analysis and task analysis, we can conclude that at the decision-making stage, the efficiency of preparing the operation will increase if:

- initial calculation of time and orientation of subordinate headquarters in relation to forthcoming actions will be carried out after receiving the combat mission, and at different stages of preparation of operations (decision-making, tasking, planning) a reduction in time will be implemented for increasing the time provided to subordinates;
- issues regarding the assessment of the situation and the formulation of the commander's concept will be put on the list of main activities on the mission analysis;
- among the activities on mission analysis, the principles of mission command will be taken into account, due to which the process of decentralized decision-making implemented via a single method will be ensured.